ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք.Երևան 01-ը փետրվարի 2018թ.,

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ Ց.Ակոպյան/ԳԱ/

Գ. Թամրազյան/ԲԱ/

Մ.Մանուկյան /ԳԱ/

Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Ապրիկյան

1. «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

1.1 «*ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01*» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին **«Բի-Դի -Օ Արմենիա» ՓԲԸ-ի** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝

1. «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով որպես նախորդ 3 տարիների ընթացքում կատարած նմանատիպ պայմանագիր ներկայացրել է «ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից կնքված և կատարված պայամանագիր, ինչպես նաև Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածքներ, որտեղ տրվում է հետևյալ տեղեկատվությունը՝

(1) 11.01.2018թ-ից «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն համարվում է «ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ-ի իրավահաջորդը,

(2) «ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ-ի միացման եղանակով դադարեցրել է իր գործունեության 11.01.2018թ-ից:

Միևնույն ժամանակ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հրավերի հավելված 5-ում և տեղեկանքում առկա է այլ տեղեկատվություն: Մասնավորապես, նշվում է, որ «ՍՕՍ Աուդիտ» ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերին մտել է Բի-Դի-Օ միջազգային ցանց և միացել է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ին, որը հանդիսանում է «ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ-ի իրավահաջորդը: Սակայն, ըստ

ներկայացված վերոնշյալ փաստաթղթերի (Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածք) նշված միացումը տեղի է ունեցել 11.01.2018թ.-ին:

Նշենք նաև, որ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրը՝ այն է 10.01.2018թ

1.2. ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը վերոնշյալ անհամապատասխանությանը հաշվի առնելով՝ գրություն է ներկայացրել ՀՀ ՝ ֆինանսների նախարարություն, խնդրելով պարզաբանել, արդյոք «ՍՕՍ Աուդիտ» ընկերության նախկինում իրականացրած պայմանագիրը կարելի է դիտարկել որպես «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջի բավարարման հիմք, հաշվի առնելով՝ հրավերի վերջնաժամկետի, հայտի ներկայացման ամսաթվի և կազմակերպությունների միացման փաստաթղթերի ամսաթվերի տարբերությունները

1.3 ՈՒստի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մինչև ՀՀ ֆինանսների նախարարությունից համապասխան պարզաբանում ստանալը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնելու մասին

2.1 . Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալու հաջորդ օրը ժամը 11:00-ին, «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամում, ք.Երևան, Թումանյան 42 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5 , դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ ---------- Ց.Ակոպյան/ԳԱ/

---------- Գ. Թամրազյան/ԲԱ/

---------- Մ.Մանուկյան /ԳԱ/

---------- Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ.Ապրիկյան